ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

17.06.2019
342-46

ՀՀ առողջապահության նախարարության
«Դատաբժշկական գիտագործնական կենտրոն»
ՊՈԱԿ-ի տնօրեն պարոն Միհեր Բիշարյանին

Տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցում

Հարգելի պարոն Բիշարյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2019 թվականի մարտի 1-ին դիմել էր «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ՝ խնդրելով տրամադրել ՀՀ առողջապահության նախարարության դատաբժշկական գիտագործնական կենտրոնի Շիրակի մարզի դատաբժշկական փորձաքննությունների բաժնի 2014 չորրորդ եռամսյակի (հոկտեմբերի 1-ից-դեկտեմբերի 31-ը) հաստիքացուցակը և այդ հաստիքներում ներգրավված անձանց անվանացանկը:

ՊՈԱԿ-ը 2019 թ.-ի մարտի 5-ի պաշտոնական գրությամբ մերժել էր տրամադրել տեղեկությունը՝ նշելով, թե պահանջվող տեղեկությունը աշխատողի անձնական տվյալներ են, և ՊՈԱԿ-ը իրավասու չէ փոխանցել այն ՝ առանց աշխատողի գրավոր համաձայնության:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ տեղեկատվություն տնօրինողը տարին առնվազն մեկ անգամ հրապարակում է հաստիքացուցակները, ինչպես նաև պաշտոնատար անձանց անունները, ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները: Սա ենթադրում է, որ մեր կողմից փնտրվող տեղեկությունը արդեն իսկ հրապարակված է եղել դեռևս 2014 թ.-ին, իսկ հրապարակված տեղեկությունը մեկ անգամ ևս տրամադրելու համար լրացուցիչ համաձայնության կարիք չկա:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տրամադրել ՀՀ առողջապահության նախարարության դատաբժշկական գիտագործնական կենտրոնի Շիրակի մարզի դատաբժշկական փորձաքննությունների բաժնի 2014 երրորդ

եռամսյակի (հոկտեմբերի 1-ից-դեկտեմբերի 31-ը) հաստիքացուցակը և այդ հաստիքներով աշխատող անձանց անվանացանկը:

Խնդրում ենք, տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝

ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան